# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար դիզելային շարժիչի ինժեկտորի նորոգման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի փետրվարի 15-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի սեպտեմբերի 4-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ՔՐԻՍՏԱՓՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ» ԱՁ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի սեպտեմբերի 4-ին կատարված փոփոխությունների արդյունքում հստակեցվել է ծառայության գնման ժամանակացույցը և հաստատվել է դրա ձեռքբերման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված Համաձայնագիր 2-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի փետրվարի 15-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-23/5 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից ծառայության ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ**